Կարգապահական գործ թիվ ԿԳ-23029

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ԿՈՉՈՒԲԱԵՎԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի, Միքայել Դանիելյանի, Արաքս Վարդանյանի և Հայկ Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի,

քննության առնելով փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևին **(այսուհետ՝ նաև Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2606), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Հմայակ Այվազյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Պալատ, հայտնել է, որ իր շահերը ներկայացնելու նպատակով դիմել է փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին և կնքել պայմանագիր **(այսուհետ՝ նաև Պայմանագիր)** «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի **(այսուհետ՝ Ընկերություն)** հետ: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ընկերության կողմից պետք է ներկայացվեին Դիմողի շահերը հողամասի աճուրդի անվավերության խնդրի լուծման, ինչպես նաև Դիմողի հոր ժառանգության փաստացի տիրապետման հիմքով ընդունման գործերով:

Դիմողը Հայտնել է, որ թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործով առաջին ատյանի դատարանում իր շահերը ներկայացրել է Ընկերության փաստաբան Նաիրա Հակոբյանը, սակայն հետագայում վերջինս դուրս է եկել գրասենյակից: Նշված

գործը ներկայումս գտնվում է վերաքննիչ դատարանում, իսկ քանի որ Դիմողը բնակվում է ՌԴ-ում այդ ժամանակահատվածից ինքը չունի տեղեկություններ գործի վերաբերյալ:

Դիմողը հավելել է, որ հիշյալ գործի կապակցությամբ տեղեկություններ ստանալու նպատակով ինքը փորձում է կապի դուրս գալ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի հետ, սակայն վերջինս չի պատասխանում նրա հաղորդագրություններին, ինչի պատճառով Դիմողը նաև տեղեկություններ չունի 2023 թվականի հուլիսի 6-ին կայացած դատական նիստի արդյունքների վերաբերյալ: Դիմողը որպես ապացույց ներկայացրել է իր և Ընկերության միջև կնքված պայմանագրի, ինչպես նաև փաստաբանին հասցեագրված իր նամակագրության պատճենները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 17.08.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 23.08.2023թ. ներկայացված բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը, կից ներկայացնելով «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի հետ ունեցած նամակագրության լուսապատճենները:

Դիմողը կարգապահական նիստին չի մասնակցել:

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հմայակ Այվազյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի հուլիսի 24-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ին «Կոնտրա Լեգեմ փաստաբանական Բյուրո» ՍՊԸ-ի և Դիմողի միջև կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որով կատարողը պարտավորվել է իրականացնել ՀՀ Արարատի մարզի, Տափերական համայնքի, Կենտրոնական փողոց թիվ 32 հասցեի հողամասի աճուրդի անվավերության խնդրի լուծմանն ուղղված իրավաբանական գործառույթներ, ինչպես նաև իրավական ապահովում Դիմողի հոր ժառանգության փաստացի տիրապետման հիմքով ընդունման համար:

Փաստաբանն, անդրադառնալով թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործի ընթացքին, հայտնել է, որ Դիմողի շահերն առաջին ատյանում ներկայացրել է «Կոնտրա Լեգեմ փաստաբանական Բյուրո» ՍՊԸ-ի աշխատակից, փաստաբան Նաիրա Հակոբյանը, ով էլ հետագայում նշված գործով վճռի դեմ 2022 թվականի

հունվարի 11-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարան ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Փաստաբանն, անդրադառնալով թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործով 2023 թվականի հուլիսի 6-ին ժամը 10:20-ին նշանակված դատական նիստին, հայտնել է, որ իր կողմից ներկայացվել է դիմում նիստը հետաձգելու նպատակով, քանի որ Դիմողի շահերը ներկայացնող փաստաբան Նաիրա Հակոբյանն ազատվել է աշխատանքից և նոր ներկայացուցչի ներգրավման համար անհրաժեշտ է նաև ծանոթանալ գործի նյութերին, հայտնելով, որ հաջորդ նիստը նշանակվել է 2023 թվականի հոկտեմբերի 19-ին ժամը 10:45-ին:

Փաստաբանը նաև նշել է, որ Դիմողը չի զրկվել իր իրավունքի պաշտպանության հնարավորությունից, քանի որ նշված գործը փոխանցվել է «Կոնտրա Լեգեմ փաստաբանական Բյուրո» ՍՊԸ-ի աշխատակից, փաստաբան Հովհաննես Բայանդուրյանին, իսկ ինչ վերաբերում է Դիմողի զանգերը անպատասխան թողնելուն, ապա, դա որոշակի առումով կապված է եղել Փաստաբանի աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ որևիցե նոր տվյալ կապված վարչական գործի ընթացքի ու արդյունքների մասին փաստաբանական ընկերությանը հայտնի չեն եղել և Դիմողի զանգերն անպատասխան թողնելը որևէ կերպ բացասաբար չի անդրադարձել նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ծառայությունների որակի վրա:

Փաստաբանի պնդմամբ, թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործով Դիմողի նախկին ներկայացուցիչ փաստաբան Նաիրա Հակոբյանը մշտապես տեղեկացրել է Դիմողին գործի ընթացքի վերաբերյալ, ինչը հաստատվում է առկա հաղորդագրություններով, որոնք Փաստաբանը ի լրումն ներկայացրել է 2023 թվականի հուլիսի 27-ին:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 17.08.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը սահմանված ժամկետում որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Փաստաբանը հայտնել է, որ վստահորդին կանոնավոր տեղեկացնելը ինքնին կապված է ծառայությունների մատուցման բուն ընթացքի հետ: Սույն դեպքում, վճիռը Դիմողի գործով կայացվել է՝ 20.11.2021թ., որը բողոքարկվել է վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանը ընդունել է վարույթ և նիստ է նշանակել՝ մեկ տարի հետո: Փաստաբանի համոզմամբ, նշված ժամանակահատվածում Դիմողին հայտնելու որևէ տեղեկություն չի եղել:

Փաստաբանը նաև հավելել է, որ անձամբ չի ճանաչել Դիմողին, իսկ ինչ վերաբերում է անպատասխան զանգերին նշել է, որ դրանք կապված է եղել վերջինիս համարի փոփոխման հետ: Փաստաբանը նաև նշել է, որ ընկերությունը ունի մոտ

երեք հարյուր գործ և Հմայակ Այվազյանի գործով նա անմիջական ներգրավվածություն չի ունեցել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.08.2023թ. թիվ 202-Ա/ԿԳ-23029 որոշմամբ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.6.1 ենթակետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

10.08.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին **(այսուհետ՝ նաև Աշխատակից)**:

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 10.10.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել հետևյալ փաստերը.

Թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործով տեղեկություններ ստանալու նպատակով՝ մինչև 2023 թվականի հուլիսի 6-ին դատական նիստը Դիմողը «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով տեղեկություններ ստանալու նպատակով 2022 թվականի հունիս ամսից մինչև 2023թ. հունիս ամիսը փորձել է կապի դուրս գալ Փաստաբանի հետ, սակայն Փաստաբանը չի պատասխանել Դիմողի զանգերին և հաղորդագրություններին:

Փաստաբանն ընդունել է այն հանգամանքը, որ չի պատասխանել Դիմողի զանգերին ծանրաբեռնվածության, ինչպես նաև թիվ ՎԴ/9945/05/20 գործով տեղեկությունների բացակայության պատճառով:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 10.10.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 09.11.2023թ. ժամը 19:30-ին և 14.12.2023թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 09.11.2020թ. Հմայակ Այվազյանը և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի նախագահ՝ Ալեքսանդր Կոչուբաևը կնքել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր*: Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև 09.11.2020թ. կնքված պայմանագրով:*

2. Ընկերությունը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ՀՀ Արարատի մարզի, Տափերական համայնքի, Կենտրոնական փողոց թիվ 32 հասցեի հողամասի աճուրդի անվավերության խնդրի լուծմանն ուղղված իրավաբանական գործառույթների իրականացումը, ինչպես նաև իրավական ապահովում Դիմողի հոր ժառանգության փաստացի տիրապետման հիմքով ընդունման գործով: *Նշված փաստը հաստատվում է միջև 09.11.2020թ. կնքված պայմանագրով:*

3. Թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործով տեղեկություններ ստանալու նպատակով՝ մինչև 2023 թվականի հուլիսի 6-ին դատական նիստը Դիմողը «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով տեղեկություններ ստանալու նպատակով 2022 թվականի հունիս ամսից մինչև 2023թ. հունիս ամիսը փորձել է կապի դուրս գալ Փաստաբանի հետ, սակայն Փաստաբանը չի պատասխանել Դիմողի զանգերին և հաղորդագրություններին: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, դրան կից Դիմողի և Փաստաբանի միջև «WhatsApp» էլեկտրոնային հավելվածում առկա նամակագրություններ ինչպես նաև Փաստաբանի բացատրությամբ և կարգապահական նիստի ընթացքում արտահայտած դիրքորոշմամբ (չի հերքել այս հանգամանքը):*

4. Փաստաբանն ընդունել է այն հանգամանքը, որ չի պատասխանել Դիմողի զանգերին ծանրաբեռնվածության, ինչպես նաև թիվ ՎԴ/9945/05/20 գործով տեղեկությունների բացակայության պատճառով: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի 24.07.2023թ. ներկայացված բացատրությամբ և Հանձնաժողովի 14.12.2023թ. կայացած նիստի ժամանակ արտահայտած դիրքորոշմամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ալեքսանդր Կոչուբաևը փաստաբան է հանդիսանում 24.05.2019 թ., և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ (մինչև այդ նշանակված տույժերը համարվում են մարված):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք ոչ միայն արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, այլ նաև ապացուցում են դրանց առկայությունը:

Ըստ այդմ, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է

հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու և իրեն հետաքրքրող հարցերին չպատասխանելու վարքագիծ:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանող Ալեքսանդր Կոչուբաևի վարքագիծը գնահատելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները.

- ***Արդյո՞ք փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը՝ որպես «Կոնտրա Լեգեմ փաստաբանական Բյուրո» ՍՊԸ-ի տնօրեն, ում հետ կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանգիր, պարտավոր էր տեղեկացնել Դիմողին նրա գործի ընթացքի վերաբերյալ,***
- ***Արդյո՞ք փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

Պատասխանելով վերը նշված հարցադրումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 1.4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գրասենյակ է հանդիսանում՝ ի թիվս այլնի, նաև **առևտրային կազմակերպությունը**, **որն իրականացնում է փաստաբանական գործունեություն** և նրա կանոնադրական կապիտալում 100 տոկոս մասնակցություն ունի փաստաբանը, իսկ **գործադիր մարմնի** (գործադիր տնօրեն, տնօրեն, կոլեգիալ գործադիր մարմին) **լիազորությունները իրականացնում է փաստաբանը(ները)**:*

Կանոնագրքի 1.4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ *օժանդակ անձնակազմ է հանդիսանում՝ փաստաբանական գրասենյակում աշխատող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ ոչ փաստաբանները):*

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ *Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Պայմանագրի 2.1.5. կետի համաձայն՝ *Կատարողը պարտավոր է Պատվիրատուին պարբերաբար, սակայն ոչ ուշ քան շաբաթը մեկանգամյա հաճախականությամբ, տեղեկացնել ծառայությունների մատուցման ընթացքի մասին:*

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այդպիսի երաշխիքների ձևավորման միջոցներից մեկը

հանդիսանում է փաստաբանի և վստահորդի միջև կնքված պայմանագիրը, որի շրջանակներում էլ փաստաբանի կողմից կատարվում է վստահորդի տրված հանձնարարությունը: Ընդ որում, Օրենքի և Կանոնագրքի կարգավորումներն իրենց բովանդակային առանձնահատկությունից ելնելով որոշակիորեն վերաբերում են և կիրառելի են ինչպես փաստաբանի, այնպես էլ Կանոնագրքի իմաստով փաստաբանական գրասենյակի կարգավիճակ ունեցող սուբյեկտներին, որոնք գործում են ի դեմս տնօրեն-փաստաբանի և փաստաբանական գործունեություն են իրականացնում օժանդակ անձնակազմի միջոցով: Նման պայմաններում, փաստաբանական գրասենյակի հետ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքելու դեպքում վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի գրասենյակի փաստաբանը, այդ թվում նրան փոխարինող փաստաբանը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում գրասենյակի տնօրեն-փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք պետք է կատարվեն հանձնարարության կատարման ընթացքում՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Տվյալ դեպքում, սույն գործով Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և դրանց կից ներկայացված ապացույցների ուսումնասիրության արդյունքում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Հմայակ Այվազյանի և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական Բյուրո» ՍՊԸ-ի՝ ի դեմս դրա տնօրեն Ալեքսանդր Կոչուբաևի միջև 09.11.2020թ. կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով ևս ամրագրվել է Դիմողին կանոնավորապես տեղեկացնելու Փաստաբանի պարտավորությունը: Նշված պայմանագրից բխող հանձնարարության կատարումը ապահովել է Ընկերության աշխատակից-փաստաբան՝ Նաիրա Հակոբյանը, ով պարբերաբար տեղեկացրել է Դիմողին գործի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն հետագայում ազատվել է աշխատանքից, ինչից հետո փաստացի Դիմողը կապ է պահպանել միան Ընկերության տնօրեն՝ Ալեքսանդր Կոչուբաևի հետ:

Մասնավորապես, թիվ ՎԴ/9945/05/20 վարչական գործով տեղեկություններ ստանալու նպատակով՝ մինչև 2023 թվականի հուլիսի 6-ին դատական նիստը Դիմողը «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով 2022 թվականի հունիս ամսից մինչև 2023 թ. հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում փորձել է կապի դուրս գալ Փաստաբանի հետ, սակայն Դիմողի զանգերը և հաղորդագրությունները մնացել են անպատասխան, որպիսի փաստը ընդունել է նաև Փաստաբանը:

Այս համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ անկախ Ընկերության աշխատակից-փաստաբան՝ Նաիրա Հակոբյանի աշխատանքից ազատվելու, գործը այլ փաստաբանի փոխանցելու, դատական գործով նոր տեղեկություններ չլինելու հանգամանքներից, այնուամենայնիվ՝ հանձնարարության կատարման ընթացքում, հանձնարարությունը փաստացի

կատարող փաստաբան-աշխատակցի բացակայության պայմաններում, Դիմողին տեղեկացնելու պարտավորությունը առաջին հերթին կրում է Փաստաբանը՝ որպես Ընկերության տնօրեն, ով Ընկերության անունից կնքել է Պայմանագիրը, իսկ Պայմանագրի 2.1.5. կետով Կատարողը ի դեմս փաստաբան- տնօրենի, ստանձնել է պարտավորություն՝ Պատվիրատուին պարբերաբար, սակայն ոչ ուշ քան շաբաթը մեկանգամյա հաճախականությամբ, տեղեկացնել ծառայությունների մատուցման ընթացքի մասին, ինչը չի կատարել, դեռ ավելին՝ Դիմողի բազմաթիվ զանգերն ու հաղորդագրությունները մնացել են անպատասխան:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները, ինչպես նաև Փաստաբանի կողմից կարգապահական նիստի ընթացքում արտահայտած դիրքորոշումները իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

<u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը՝

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, իսկ մինչ այդ նշանակված կարգապահական տույժերը համարվում են մարված,

Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով, Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի (արտոնագիր՝ թիվ 2606) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23029-2-Ա
14 դեկտեմբերի 2023թ.
ք.Երևան